ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Միհեր Արմոյի Շիրինյանի «Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

ՀՀ հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրները արդի միջազգային հարաբերություններում բազմաշերտ են և պայմանավորված են տարածաշրջանային ու գլոբալ զարգացումներով: Ազգային անվտանգության ապահովումը յուրաքանչյուր պետության կեսական շահն է, իսկ ՀՀ դեպքում, հաշվի առնելով նրա աշխարհագրական դիրքը, հարևան պետությունները և պատմաքաղաքական փորձի վերլուծությունը, հավաքական անվտանգային համակարգերում ինտեգրումն ունի խիստ ռազմավարական նշանակություն: Ժամանակակից աշխարհում ՀՀ համար հավաքական անվտանգությունը ներառում է ոչ միայն ռազմական, այլև քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, էներգետիկ և բնապահպանական բաղադրիչներ: Այս առումով, ՀՀ անվտանգության ճարտարապետությունը հենվում է ինչպես երկկողմ ռազմավարական գործընկերությունների, այնպես էլ բազմակողմ անվտանգային կառույցներին անդամակցության վրա: Միաժամանակ, ազգային անվտանգության ապահովման հարցում չափազանց կարևոր է նաև ներքին կայունությունը, քաղաքական համակարգի ամրապնդումը և հասարակության համախմբվածությունը: Բազմավեկտոր արտաքին ու անվտանգային քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը կարծես հրամայական է Հայաստանի պես փոքր պետությունների համար, հատկապես, կենսական ազգային շահերի ապահովման առումով: ՀՀ-ն հանդիսանում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ է, ինչը նշանակում է կազմակերպությանն անդամակցած պետությունների փոխադարձ պարտավորություններ անվտանգության ապահովման, անվտանգային սպառնալիքներին դիմակայելու և

ռազմական համագործակցության ոլորտում: Միաժամանակ, ՀԱՊԿ արդյունավետության և անդամ-պետությունների միջև անվտանգային շահերի համադրման վերաբերյալ խնդիրները մնում են արդիական, հատկապես, անվտանգային մարտահրավերներին ՀՀ դիմագրավելու համատեքստում: Բացի այդ, ՀՀ զարգացնում է համագործակցություն նաև այլ գործընկերների հետ, այդ թվում՝ ՆԱՏՕ, ԵՄ և այլ դերակատարների հետ, ինչը, անվտանգային քաղաքականության հավասարակշռման ու արդյունավետության առումով, երբեմն հանգեցնում է բազմաշերտ խնդիրների:

Հետխորհրդային պետությունների հետ տարբեր ինտեգրացիոն և անվտանգային ձևաչափերում համագործակցության դիտանկյունից ՀՀ-ի համար հատկապես էական նշանակություն ունեն այդ կազմակերպություններին անդամակցող գործընկերների հետ հարաբերությունները վերանայելու և դրանք ՀՀ ազգային շահերին համահունչ դարձնելու հիմնախնդիրները: Այս համատեքստում հատկանշական է, որ երկարամյա պատմաքաղաքական սերտ կապերը և էներգետիկ կախվածությունը գործընկերներից հաճախ սահմանափակում են մեր ռազմաքաղաքական մանևրումների հնարավորությունները: Ուստի, կենսական անհրաժեշտություն է դառնում ՀՀ պաշտպանական ներուժի ամրապնդումը, ռազմական արդյունաբերության զարգացումը և միջազգային հարաբերություններում իր դիրքերի ամրապնդումը՝ ՀՀ հավաքական անվտանգային համակարգարգերին առնչվող խնդիրների բացահայտման ու դրանց արդյունավետ լուծման տեսանկյունից:

Ավելին, անվտանգային քաղաքականության արդյունավետությունն ապահովելու համար ՀՀ պետք է շարունակի ակտիվորեն նպաստել տարածաշրջանում խաղաղության ու կայունության գաղափարներ, ինչպես նաև հետամուտ լինի միջազգային իրավունքի նորմերի կիրառմանը: Սա նշանակում է ոչ միայն անվտանգային ռազմավարական փաստաթղթերի վերանայում ու արդիականացում, այլև անվտանգային հարցերի վերաբերյալ հասարակական-փորձագիտական քննարկումների ակտիվացում և կարևորագույն անվտանգային խնդիրների լուծման համար ազգային կամքի համախմբում: Արդյունավետ հավաքական անվտանգային գործակցությունը ՀՀ համար ոչ միայն տարածաշրջանային սպառնալիքներին դիմակայելու, այլև պետականության և ինքնիշխանության ամրապնդման հիմքն է:

Ատենախոսական աշխատանքը ձևակերպված է ակադեմիական ոճով, աշխատանքը կառուցվածքայնորեն բաժանված է գլուխների և ենթագլուխների, որոնցում համապատասխանաբար քննարկվում են տվյալ թեմաներին առնչվող գիտակիրառական նշանակության տարբեր խնդիրներ:

Այնուամենայնիվ, Մ. Շիրինյանի ներկայացրած **«Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունն ունի որոշակի խնդիրներ, որոնք նկատառելը էականորեն կբարձրացնի աշխատանքի հետազոտական արժեքը: Դրանցից հատկանշական են՝

1. Թեև Ազգերի լիգայի և ՄԱԿ-ի թերությունների համեմատական վերլուծությունը կարևոր է ակադեմիական առումով, սակայն երկրորդ գլուխը ծանրաբեռնված է պատմական անդրադարձներով: Բացի այդ, քաղաքագիտական շրջանակներում Ազգերի լիգայի և ՄԱԿ-ի համեմատությունն արդեն իսկ արված է բազմիցս, ինչը որոշակիորեն ազդում է 2.2 ենթագլխի արդիականության և նպատակայնության վրա: Աշխատանքը կշահեր, եթե պատմական էքսկուրսի փոխարեն այդ ծավալը նպատակաուղղվեր ժամանակակից սպառնալիքներին ՀՀ դիմակայման և գործնական մոդելների առաջադրմանը:
2. Ատենախոսն արձանագրում է ՀԱՊԿ-ի արդյունավետության նվազումը և դաշնակցային պարտավորությունների խախտումները, սակայն հարցը չի դիտարկում տարածաշրջանային դերակատարների շահերի մերձեցման և աշխարհաքաղաքական համակարգային տեղաշարժերի դիսկուրսում: Կառույցի դերի նվազումը ներկայացված է որպես իրավաքաղաքական միջոցների անկատարություն, մինչդեռ այն ուժային կենտրոնների (մասնավորապես՝ ՌԴ և Թուրքիայի) սառն ու ռացիոնալ քաղաքական գնահատումներ անմիջական արդյունքն է:
3. ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ անվտանգային հարաբերությունները վերլուծելիս՝ (ենթագլուխներ 3.1 և 3.2), հեղինակը չի գնահատում կատարում արտաքին ռիսկերը: Չկա արևմտյան անվտանգային կառույցներին ինտեգրվելու փորձերի դեպքում տարածաշրջանային դերակատարների (օրինակ՝ Իրանի և Ռուսաստանի) հավանական կոշտ հակազդեցության և ՀՀ ռեսուրսային խոցելիության վերլուծություն:

4. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը հետազոտության մեջ քննարկվող տարբեր հետազոտական հարցերի համատեքստում անվտանգային հիմնախնդիրները վերլուծեր և գնահատեր թե Հայաստանի, և թե միջազգային նշանակության անվտանգային ռազմավարական փաստաթղթերի վերլուծության ու գնահատման տեսանկյունից: Մասնավորապես, կարելի էր համեմատական վերլուծության ենթարկել 2007 և 2020 թվականների ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունները և դրանցում հավաքական անվտանգությանն առնչվող խնդիրներն ու հնարավորությունները:

Այսպիսով, Միեր Արմոյի Շիրինյանի **«Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերոնշյալ թերությունները բնավ չեն ստվերում սույն աշխատանքի գիտական արժեքը, և ատենախոսը արժանի է ԻԳ.00.02 – քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ մասնագիտացմամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ

քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ն. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոս Նարեկ Հրանտի Գրիգորյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

14.04.2026 թ.